

## ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի չորրորդ գումարման ութերորդ նստաշրջանի արդյունքների մասին

(14.09.2010թ.-09.12.2010թ.)

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի չորրորդ գումարման ութերորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 5 քառօրյա նիստ:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 140 հարց, որից 68-ը ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնություններն էին, 60-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորներինը, 2-ը՝ Ազգային ժողովի պատգամավորների և ՀՀ կառավարության համատեղ, 10-ը՝ պարտադիր եւ ըստ անհրաժեշտության քննարկվող այլ հարցեր: Հետագայում նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 49 հարցով, որից 38-ը ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնություններն էին (3-ը անհետաձգելի), 5-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորներինը, 6-ը՝ պարտադիր եւ ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր (2-ը՝ ԱԺ Ժառանգություն և ՕԵԿ պատգամավորական խմբակցությունների հարցապնդումներն էին):

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 189 հարցերից 171-ը օրենքների նախագծեր կամ նախագծերի փաթեթներ էին, որոնցից աշնանային նստաշրջանի ընթացքում քննարկվել է ամբողջությամբ ընդունվել են 32-ը (24-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններն էին (3-ը ՀՀ կառավարության որոշմամբ՝ անհետաձգելի) 8-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորներինը):

Ամբողջությամբ ընդունված 32 օրենքներից 2-ը «մայր» օրենքներ էին, մեկը պատգամավորական նախաձեռնություն էր, մյուսը՝ ՀՀ կառավարության, իսկ 30-ը՝ գործող օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին:

Նստաշրջանի ընթացքում`

ա) Ազգային ժողովը լսեց

-2009 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույցը,

-ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի եզրակացությունը «2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության` ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունում ընդգրկված առաջարկությունների կատարման ընթացքի մշտադիտարկման (մոնիթորինգի) վերաբերյալե /927-04.06.10/ և ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի եզրակացությունը «2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության` ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունում ընդգրկված առաջարկությունների կատարման ընթացքի մշտադիտարկման (մոնիթորինգի) վերաբերյալե /1020-09.11.10/

բ) Ազգային ժողովը քննարկեց

-Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2009 թվականի տարեկան հաշվետվությունը,

-«Ժառանգությունն և ՕԵԿ խմբակցությունների հարցապնդումները,

զ) Ազգային ժողովն ընդունեց

«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը,

դ) Ազգային ժողովը հաստատեց

-Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2011 թվականի գործունեության տարեկան ծրագիրը,

ե) ԱԺ նախագահի տեղակալ Արևիկ Պետրոսյանը հանդես եկավ իր հրաժարականի մասին հայտարարությամբ.

դ)

Ազգային ժողովն ընտրեց.

-Սամվել Բալասանյանին ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալ,

-Աշոտ Խաչատրյանին Սահմանադրական դատարանի անդամ:

Սահմանադրական դատարանի նորանշանակ անդամներ Արևիկ Պետրոսյանը և Աշոտ Խաչատրյանը երդվեցին Ազգային ժողովի նիստում:

Նստաշրջանի ընթացքում վավերացվեցին 24 միջազգային պայմանագրեր,

որոնցից 4-ը ֆինանսատնտեսական, 2-ը` բնապահպանության, 9-ը` իրավական օգնության և արդարադատության բնագավառներում համագործակցության մասին էին եւ այլն:

Նստաշրջանի ընթացքում 21 պատգամավոր գրավոր և 52 պատգամավոր բանավոր հարցերով դիմել են ՀՀ կառավարությանը: «Օրինաձ երկիր» խմբակցությունը մեկ հարցապնդումով դիմել էր ՀՀ կառավարությանը: 90 պատգամավոր հանդես են եկել հայտարարությամբ, որից 34-ը վերաբերում էր գործադիրի գործունեությանը: